Հանրապետական մանկավարժահոգեբանական
կենտրոն

«Հանրակրթական դպրոցների ուսուցիչների և ուսուցչի օգնականների դասավանդման հմտությունների զարգացման ապահովում» ծրագիր

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Դպրոց՝ Արագածոտնի մարզի Բազմաղբյուրի Ն.Սաֆարյանիանվան միջնակարգ դպրոց ՊՈԱԿ

Առարկա՝ հայոց լեզու և գրականություն

Թեմա՝ Ուսումնառության ակտիվ մեթոդները սովորողների ներգրավվածության բարձրացման միջոց

Վերապատրաստող մենթոր՝ Ն. Մեսրոպյան

Ուսուցիչ՝ Լ. Հովհաննիսյան

Երևան 2023

Բովանդակություն

Բովանդակություն ---------- 2

Ներածություն ---------- 3

Սովորողի ներգրավման խնդիրը մանկավարժության մեջ ---------- 4

ՈՒՀԶ-ն սովորողների ներգրավման բազմազանությունն ապահովող համակարգ ---------- 7

Ուսուցման ակտիվ մեթոդներ ----------9

Ակտիվ մեթոդների կիրառման իմ փորձը հայոց լեզվի, գրականության դասաժամին----------13

Եզրակացություն ----------18

Գրականություն---------- 19

Ներածություն

Հաճախ դասարանում աշակերտը ձանձրանում է և անհամբեր սպասում զանգին, մյուսի համար դասը բարդ է և անհասկանալի, մեկն էլ կարծում է, որ առարկան կյանքում իրեն պետք չէ, ուստի սովորելն անիմաստ է: Այսօր ուսուցիչը հաճախ է հանդիպում նման իրավիճակների: 21-րդ դարում տեղեկատվական տեխնոլոգիայի, տնտեսության զարգացման, մտածողության գլոբալացման պայմաններում փոխվում են սովորողների հետաքրքրության պահանջներն ու սահմանները: Սրանց համապատասխան պետք է փոփոխվեն ուսուցիչների դասավանդման մեթոդիկան, սովորելու պայմաններն ու միջավայրը, մոտիվացիայի տարբերակները: Ուստի ուսուցիչը պիտի կիրառի նորարական մեթոդներ, մոտիվացնող հնարներ, որոնք սովորողին ակամա կներգրավեն դասապրոցեսում: Այս հետազոտական աշխատանքը օգնություն է ուսուցչին՝ զինվելու իր առջև ծառացած դժվարություններին դիմակայելու նոր գիտելիքներով: Աշխատանքում ընդգրկված են ժամանակակից մեթոդներ, մոտեցումներ, հնարներ, որոնք վերջին տարիներին կիրառվում են շատ երկրներում, ինչպես նաև Հայաստանում: Դրանք սովորողներին դասապրոցեսում ներգրավելու արդյունավետ միջոցներ են: Հետազոտական այս աշխատանքի **նպատակները՝**

1/աջակցել ուսուցիչներին՝ ուսուցումը ավելի հետաքրքիր դարձնելու համար
2/ զարգացնել ուսուցիչների՝ ավելի արդյունավետ ուսուցում կազմակերպելու կարողություններն ու հմտությունները
3/բարձրացնել դասավանդման և ուսումնառության որակը:

Խնդիրները՝

1/ ուսումնասիրել հետազոտման համար ընտրված թեմային համապատասխան գրականություն, մշակել այն և նախապատրաստվել հետազոտությանը
2/հիմնախնդիրը փորձել տեսնել սեփական դասապրոցեսի ընթացքում, կիրառել ակտիվ մեթոդներ, լսել նաև աշակերտների կարծիքները
3/սեփական փորձը համեմատել ուսումնասիրված գրականության հետ
4/աշխատանքում նկարագրել թեման, վերլուծել թեմայի շուրջ գրված նյութերը, ապա ներկայացնել սեփական փորձով ձեռք բերածը
5/ձևակերպել եզրահանգումներ՝առաջարկելով նոր մոտեցումներ:

Սովորողի ներգրավման խնդիրը մանկավարժության մեջ

«Պատմիր ինձ, և ես այն կմոռանամ,

ցույց տուր, և ես կհիշեմ, ինձ հետ

կատարիր, և ես կսովորեմ»

Ն. Ա. Կռալյա

Սովորողների գործունեության ակտիվացման, ինքնուրույնության, ստեղծարարության զարգացումը եղել և մնում է մանկավարժության ու հոգեբանության արդիական խնդիրներից մեկը: Որպեսզի արդյունավետ լինի ուսուցումը, նախ դասը պետք է հետաքրքիր լինի սովորողներին, և նրանք պետք է ներգրավված լինեն դասապրոցեսում: Իսկ մեր օրերում ուսուցչի համար դժվար է դասապրոցեսում աշակերտին ներգրավված պահել, քանի որ նրանց հետաքրքրության, տեղեկություն ստանալու սահմանները մեծ են: Մանկավարժությունը արագ զարգացող գիտություն է, այն փոխվում է ժամանակի պահանջներին համապատասխան: Ժամանակակից կրթության նպատակը կոմպետենցիաներ ձևավորելն է: Իսկ պասիվ մեթոդներով (դասախոսություն, ավանդական ձևով դաս բացատրելը) կարելի է տալ գիտելիք, բայց ոչ կարողունակություններ ու հմտություններ: Ակտիվ և ինտերակտիվ ուսուցման արդյունքում զարգանում են սովորողների կարողունակությունները, մտածողությունը: Ակտիվ ուսուցման հիմքում ընկած է երկխոսությունը, երկխոսություն սովորողի և ուսուցչի, սովորողի և սովորողի միջև (տե՛ս նկար 1):



նկար 1

Նկար 1-ում կարմիր գույնով պատկերվել է պասիվ մեթոդը, կապույտով ՝ ակտիվ, իսկ կանաչով՝ ինտերակտիվ մեթոդը: Միշտ չէ, որ հնարավոր է միայն ակտիվ մեթոդնե րով դասավանդել: Հաճախ անհրաժեշտ է միաժամանակ օգտագործել և՛ ակտիվ, և՛ ավանդական մեթոդներ: Դրանք պետք է կիրառել ճիշտ ժամանակին և հստակ նպատակով:

Գոյություն ունեն ուսուցանվողների ակտիվության աղբյուրների որոշման տարբեր մոտեցումներ: Տ. Ս. Պանինան նշում է, որ ճանաչողական ակտիվությունն անձնային որակ է, որը ձեռք է բերվում, ամրապնդվում ու զարգացվում է հատուկ կազմակերպված ճանաչողական գործընթացում՝ հաշվի առնելով ուսուցանվողների անհատական և տարիքային առանձնահատկությունները: Հետազոտողների մեկ այլ խումբ համարում է, որ ակտիվության աղբյուրը գտնվում է մարդուն շրջապատող բնական միջավայրում, և դիտարկում են գործոնները, որոնք խթանում են ուսուցանվողների ակտիվությունը: Նման գործոնների թվին դասվում են ճանաչողական և մասնագիտական հետաքրքրությունը, ուսումնական-ճանաչո ղական գործունեության ստեղծարար բնույթը, պարապմունքների անցկացման խա ղային բնույթը, վերը նշված գործոնների հուզական ազդեցությունը: Երրորդ մոտեցումն ակտիվության աղբյուրները կապում է դասավանդողի անձի և նրա աշխատանքի միջոցների հետ: Որպես ուսուցման ակտիվացման մեթոդներ՝ այստեղ առանձնացվում են խնդրայնությունը, փոխադարձ ուսուցումը, հետազոտումը, անհատականացումն ու ինքնաուսուցումը, ինքնավերահսկման և ինքնակարգավորման մեխանիզմը, մոտիվացիայի նոր տեսակների ակտիվացումը, ուսուցանվողների զինումը գործունեության, գիտելիքների, կարողությունների յուրացման արդյունավետ միջոցներով[1]: Սովորողներին ակտիվությունը խթանելու համար պետք է հասկանալ և պարզել սովորողի հետաքրքրությունները, անձնային որակները, խնդիրները, մետաճանաչողությունը: Սովորողի ներաշխարհը բացահայտելու համար կարելի է դասապրոցեսում օգտագործել հարցաթերթիկներ, հարցում անել, մի քանի կարևոր հարցադրումներով ճանաչել սովորողին և մշակել ճիշտ ռազմավարություն: Բնականաբար, յուրաքանչյուր սովորողի հետաքրքրություններն ու խնդիրները այլ են, ուստի և հնարավոր չէ բոլորի համար ընտրել նույն մոտեցումը: Օրինակ՝ ուսուցման որևէ ակտիվ հնարի

[1] Ռ. Աղուզումցյան, Լ. Պետրոսյան, Ս.Պողոսյան, Ա. Խաչատրյան Կառավարչական որակների զարգացման հոգեբանական օրինաչափությունները Երևան 2017 էջ 26-27

միջոցով կարող ենք մեկ սովորողի մոտիվացնել և ներգրավել դասապրոցեսում, իսկ մյուսին՝ ոչ: Ուսուցման ակտիվ մեթոդներով դասավանդման ժամանակ ուսուցիչը չի մատուցում պատրաստի գիտելիքներ, այլ սովորողները գիտելիքներն ինքնուրույն են ձեռք բերում ակտիվ ճանաչողական գործունեության ընթացքում: Այսպիսով, անհրաժեշտ է խթանել երեխայի հետաքրքրասիրություն, գիտելիքը նա ինքը կգտնի: Սովորողների ներգրավվածության բարձրացման եղանակները բազմազան են: Դրանցից են՝

1/Ուսուցման պայմանների, միջավայրի ստեղծում

Ինչ խոսք, սովորողի համար ուսումնառությունը կլինի հաճելի ու արդյունավետ պրոցես, եթե նա սովորի դիդակտիկ պարագաներով, համակարգիչներով , լաբորատոր նյութերով հագեցած դասարանում:

2/Առարկան, դասավանդման նյութը կապել իրական կյանքի հետ

Եթե սովորողը գիտի, թե տվյալ գիտելիքը ինչու է ինքը սովորում և իրական կյանքում որտեղ է իրեն պետք գալու, ապա մեծանում է նրա մոտիվացիան: Այս դեպքում հեշտ է աշակերտին ներգրավել դասապրոցեսում:

3 /Դասի մուտքը

Ուսուցանողը պիտի ջանա յուրաքանչյուր դասի մուտքը դարձնի յուրօրինակ և խորհրդավոր: Աշակերտները սիրում են գաղտնիքներ և ցանկանում են որպե առաջ բացահայտել դրանք:

4/Անհատական մոտեցում

Աշակերտները սովորում են տարբեր ձևով. մեկը հեշտությամբ է սովորում, երբ դասանյութը մատուցվում է պատկերների հետ միասին, մյուսը լավ է հիշում, եթե գիտելիքը լսում է, երրորդը դասը յուրացնում է գրելով ևն: Ուստի անհրաժեշտ է յուրաքանչյուր սովորողի ցուցաբերել անհատական մոտեցում՝ նրա կարողություն ներին, խառնվածքին և ընդունակություններին համապատասխան:

5/Ակտիվ մեթոդների կիրառում

Սովորողին դասապրոցեսին մասնակից դարձնելու արդյունավետ միջոց է ակտիվ, փոխներգործուն մեթոդների կիրառումը: Այս մեթոդները դասը դարձնում են աշակերտակենտրոն: Նա միշտ գտնվում է հետազոտելու, համադրելու, վերլուծելու, բացահայտելու պրոցեսում:

ՈՒՀՁ-ն սովորողների ներգրավման բազմազանությունն ապահովող համակարգ

Ուսուցման համընդհանուր ձևավորումը արժանահավատ համակարգ է, որի նպատակն է ուսուցում բոլորի համար: ՈՒՀՁ-ն ենթադրում է ուսուցման այնպիսի համակարգ, որն ուսումնասիրում և գնահատում է սովորողների կարիքները, առաջարկում է ուսուցման համապատասխան պայմաններ և դասավանդման բազմազան ձևեր: Այսպիսի դասավանդման կարիք ունեն հատկապես ուսուցման առանձնահատուկ կարիք ունեցող աշակերտները, որոնց նկատմամբ ուսուցիչը պետք է ցուցաբերի անհատական մոտեցում, որպեսզի նրանց բաց չթողնի ուսումնառության պրոցեսից: ՈՒՀՁ-ն ներառում է բոլորի համար հավասար հնարավորութ- յուններ ապահովելու, բազմազանությունը հաշվի առնելու, խտրականությունը բացառելու սկզբունքները: ՈՒՀՁ-ն կազմված է երեք հիմնական սկզբունքներից՝ նյութի ներկայացման, գիտելիքի արտահայտման և ներգրավման ձևերի բազմազա- նություն: Երեք սկզբունքներից յուրաքանչյուրը համապատասխանաբար ունի երեք ենթասկզբունք, որոնք ներկայացված է նկար 2-ում[2]: ՈՒՀՁ-ի երրորդ սկզբունքը ներառում է հետևյալ երեք ենթասկզբունքները՝

1/ տրամադրել հնարավորություններ՝ հետաքրքրությունները խթանելու համար,

*2/*խրախուսել ջանքերի շարունակականությունը և տոկունությունը,

*3/*ինքնատիրապետում և ինքնագնահատում:

Եթե տեղեկույթը չի կապվում սովորողի հետաքրքրությունների հետ, ապա սովորողը չի կարևորում դրա նպատակը, և տեղեկույթը նրա համար դառնում է անհասանելի: Ուստի նախապես պետք է հասկանալ սովորողի հետաքրքրությունների շրջանակը, մոտիվացիայի աղբյուրը: Առաջին ենթասկզբունքը դասարանում կարելի է կիրառել՝ հետևելով հետևյալ քայլերին՝

ա/ապահովել բավարար հնարավորություններ անհատական ընտրություն կատարելու և ինքնուրույնության համար

բ/ուսումնառությունը կապել սովորողների առօրյայի և իրական կյանքի հետ

[2] Մ. Խաչատրյան , Մ. Դավթյան Դասավանդման ժամանակակից մոտեցումներ ու մեթոդներ Զանգակ Երևան 2019թ էջ 44



Նյութի ներկայացման ձևերի բազմազանություն	Ուսումնական գործունեության և գիտելիքն արտահայտելու ձևերի բազմազանություն	Ներգրավման ձևերի բազմազանություն
Ընկալում	Ֆիզիկական գործունեություն	Հետաքրքրության խթանում
Լեզու և սիմվոլներ	Սահուն արտահայտվելու հմտություններ	Ջանքերի շարունակականություն և տոկունություն
Ըմբռնում	Մտավոր գործընթացներ	Ինքնատիրապետում և ինքնակարգավորում

նկար 2

գ/նվազեցնել սպառնալիքները, վտանգն ու անհանգստացնող երևույթները:
Ուսումնառությունը հետևողական ջանքերի, համառության արդյունք է: Երկրորդ ենթասկզբունքը կարելի է կիրառել՝ հետևելով հետևյալ քայլերը՝
ա/ընդգծել և տեսանելի դարձնել նպատակների և վերջնարդյունքների կարևորությունը
բ/տարբերակել պահանջներն ու ռեսուրսները ուսումնառության օպտիմալ բարդության համար
գ/խրախուսել համագործակցությունն ու հաղորդակցությունը
դ/տրամադրել դեպի կատարյալն ու ավելի լավն ուղղորդող հետադարձ կապ:
Ինքնատիրապետման և ինքնակարգավորման հմտությունները օգնում են սովորողներին՝ վերահսկելու սեփական զգացմունքները, ինչպես, օրինակ՝ բարկությունը, ընկճվածությունը կամ միայնակ լինելու զգացողությունը[3]: Այս ենթասկզբունքը կարելի է կիրառել՝ հետևելով տրված քայլերին՝
ա/խթանել մոտիվացիան բարձր ակնկալիքների և համոզմունքների միջոցով
բ/զարգացնել դժվարությունները ինքնուրույն հաղթահարելու անձնային ունակություններ և ռազմավարություններ
գ/զարգացնել ինքնագնահատման ունակությունները:

[3] Մ. Խաչատրյան , Մ. Դավթյան Դասավանդման ժամանակակից մոտեցումներ ու մեթոդներ Զանգակ Երևան 2019թ էջ 98

Ուսուցման ակտիվ մեթոդներ

Ուսուցումը նպատակային և հաջողված լինելու համար կարևոր է դասավանդողի կողմից ակտիվ մեթոդների կիրառումը: Սակայն սա ամենևին չի նշանակում բացառել ավանդական մեթոդները: Ուսուցման մեթոդները պետք է ընտրել ըստ թեմայի, սովորողների ունակության մակարդակի, ուսումնական նյութի ժամաքանակի, սովորողների քանակի և այլնի: Հետևաբար, անհրաժեշտ է համադրել ավանդական և ինտերակտիվ մեթոդները: Ուսուցումը հնարավոր է կազմակերպել պասիվ, ակտիվ, ինտերակտիվ մեթոդներով:

Պասիվ մեթոդի դեպքում դասապրոցեսի կենտրոնում ուսուցանողն է, նա է ակտիվ գործում, իսկ սովորողները լսողի դերում են: Այս մեթոդը քիչ արդյունավետ է, սակայն կարելի է կիրառել, եթե թեմային հատկացված ժամաքանակը քիչ է:

Ակտիվ ուսուցման մեթոդը սովորողների և ուսուցանողի փոխազդեցության կազմա կերպման ձև է, որի ժամանակ սովորողները պասիվ լսողներ չեն, այլ ակտիվ մասնակիցներ:

Ինտերակտիվ մեթոդը նույնպես ակտիվ մեթոդ է, որը մեր օրերում լայն տարածում է գտել: Այս դեպքում ուսուցանողի դերը ավելի է նվազում, նա կազմակերպում է որևէ համագործակցային աշխատանք և սովորողներին տալիս է հանձնարարություններ, ուղղորդում ու աջակցում:

Ակտիվ ուսուցման առավելություններն են՝

ա/սովորողների բարձր ակտիվություն ամբողջ դասապրոցեսի ընթացքում

բ/համագործակցության ընթացքում նոր արժեքային կողմնորոշումների և դիրքորոշում ների ձևավորում՝ նպաստում են անձի ինքնաբացահայտմանը

գ/խմբային աշխատանքում հմտությունների ձեռքբերում

դ/դժվար, խնդրահարույց իրավիճակներում ճիշտ կողմնորոշվելու կարողունակության ձեռքբերում

ե/ձևավորում է տեղեկատվությունը ինքնուրույն վերլուծելու կարողություն[4]:

---

[4] file:///C:/Users/homepc/Desktop/%D5%B0%D5%A5%D5%BF%D5%A1%D5%A6%20%D6%85%D6%80%D5%AB%D5%B6%D5%A1%D5%AF.pdf



նկար 3

Ակտիվ, ինտերակտիվ մոտեցումներն ու մեթոդները բազմաթիվ են: Ակտիվ ուսուցման մոտեցումներ են՝

Շրջված դասարան- Ժամանակակից ակտիվ ուսուցման մոտեցում է, որի կիրառման ժամանակ սովորողը տանը ծանոթանում է նոր դասի բովանդակության, հասկացութ-յունների հետ, իսկ դպրոցում վերլուծում, քննարկում են թեման և դրա վերաբերյալ կատարում են վարժություններ: Սա նպատակահարմար է կիրառել ծավալուն թեմաներ ուսումնասիրելիս՝ ժամանակ շահելու և խնայելու համար: Ուսուցանողը կատարում է ղեկավարողի, խորհրդատուի դեր, ով սովորողներին դասանյութի հետ նախապես փոխանցում է տեսանյութեր, ձայնագրություններ, հմտություններ զարգացնող աշխատանքներ[5]:

Նախագծային աշխատանք -Նախագծային աշխատանքը ուսուցման ժամանակա կից մոտեցում է: Մոտեցման կիրառումը ապահովում է ակտիվություն, աշխուժություն, ֆիզիկական հաջորդականությունների, հնարների համադրություն, որոնք իրականաց վում են տրված առաջադրանքը կատարելու նպատակով: Նախագծային մեթոդը հանդիսանում է հետազոտական, ստեղծագործական մեթոդների համադրություն: Այստեղ ուսուցանողը ստանձնում է մշակողի, համակարգողի, փորձագետի, խորհրդատուի դեր:Սա նշանակում է, որ նախագծային աշխատանքի հիմքում ընկած է սովորողի ճանաչողական հմտությունների, սեփական գիտելիքներն ինքնուրույն

5 https://hy.wikipedia.org/wiki/%D5%87%D6%80%D5%BB%D5%BE%D5%A1%D5%AE_%D5%A4%D5%A1%D5%BD%D5%A1%D6%80%D5%A1%D5%B6

ձևակերպելու կարողությունների զարգացում[6]:

Ակտիվ մեթոդները արդյունավետ են կիրառել սովորողներին մոտիվացնելու, դասին մասնակցային դարձնելու համար: Խոսենք ակտիվ մեթոդներից մի քանիսի մասին:

Գիտեմ, ուզում եմ իմանալ, սովորեցի(ԳՈՒՍ)-Դասը սկսելու շատ հայտնի հնար է ԳՈՒՍ-ը: Դասասկզբում ուսուցանողը գծում է Մ-ձև աղյուսակ, որի ձախ սյունակում գրում է՝ գիտեմ, կենտրոնում՝ ուզում եմ իմանալ, աջ սյունակում՝ սովորեցի բառերը: Դասի թեման հայտնելուց հետո ուսուցանողը դիմում է սովորողներին հետևյալ հարցով. ի՞նչ գիտեքայս թեմայի, հասկացության մասին: Ապա լրացնում է գիտեմ սյունակը: Հաջորդիվ ոսվորողներին հարցնում է՝ ի՞նչ եք ուզում իմանալ այդ թեմայի մասին: Եվ լրացնում է ուզում եմ իմանալ սյունակը: Դասի վերջում լրացնում է սովորեցի սյունակը:

Մտագրոհ- Դասի մասնակցային սկիզբ ապահովող լավագույն մեթոդներից մեկը մտագրոհն է: Մտագրոհի միջոցով ուսուցանողը դասարանից հավաքում է մտքեր տվյալ թեմայի վերաբերյալ: Ընդ որում՝ մտագրոհի ժամանակ կարևոր է մտքերի քանակը.... Դանդաղ մտածող, ոչ ակտիվ սովորողները կարող են դուրս մնալ մտագրոհից: Դրա համար առաջարկվում է օգտագործել նաև մտագրոհի գրավոր տարբերակը: Այս մոտեցումը չի փոխարինում բանավոր մտագրոհին , այլ պարզապես լրացնում է:[7]

Խճանկար- Խճանկար կամ Ջիգսո մեթոդը համագործակցային ուսուցման մեթոդ է, որի կիրառության ժամանակ սովորողները խորամուխ են լինում ուսումնակն նյութի որոշակի հատվածի, որոշակի հիմնախնդիրների մեջ և դրանք ուսուցանում իրենց դասընկերներին: Բոլոր խմբերի գործունեության արդյունքները միավորվում են և դառնում են ողջ դասարանի սեփականությունը: Մեթոդին բնորոշ հատկություններից է այն, որ սովորողները մեծ պատասխանատվություն են կրում միմյանց ուսումնառության համար և հանդես են գալիս և՛ սովորողի, և սովորեցնողի դերերում:[8]

Պրիզմա- Մեթոդը կիրառվում է դասի խթանման փուլում: Այն հնարավորություն է տալիս սովորողներին ազատ ու անկաշկանդ մտածել որևէ թեմայի շուրջ: Մեթոդը արդյունավետ է կարճ բառերի, հատկանիշների թվարկման ժամանակ: շարժունակություն, հետաքրքրություն:

Դերայի խաղի նպատակը սովորողների մեջ հետաքրքրություններ առաջացնելն է,

---

[6] https://hy.wikipedia.org/wiki/%D5%86%D5%A1%D5%AD%D5%A1%D5%A3%D5%AE%D5%A1%D5%B5%D5%AB%D5%B6_%D5%B4%D5%A5%D5%A9%D5%B8%D5%A4

[7] Ուսուցման արդյունավետ հնարներ Երևան Ֆրիդրիխ Էբերտ հիմնադրամ Հայաստան 2020 էջ 26-27

[8] https://hy.wikipedia.org/wiki/%D4%BD%D5%B3%D5%A1%D5%B6%D5%AF%D5%A1%D6%80_%D5%AF%D5%A1%D5%B4_%D5%8B%D5%AB%D5%A3%D5%BD%D5%B8

ինչպես նաև ստեղծագործական, հաղորդակցական և այլ հմտություններ զարգացնելը: Այս մեթոդը օգտակար է, երբ փորձ է արվում ցույց տալ, որ նույն թեմայի շուրջ տարբեր մարդիկ տարբեր կարծիք կարող են ունենալ: Մեթոդը արդյունավետ է և այսպես ձեռք բերված գիտելիքը մնայուն է: Դերային խաղը պետք է մանրամասն ծրագրված և ուղղորդված լինի ուսուցանողի կողմից: Այս մեթոդով սովորողները ձեռք են բերում ինքնուրույնություն, սովորում են աշխատել թիմով՝ մեկը մյուսին օգնելով, ազատվում են տարբեր տեսակի բարդույթներից, վախերից, սովորում են լսել միմյանց, զարգանում են նրանց մտածելու, երևակայելու, ստեղծագործելու կարողությունները:

Բանավեճ- Բանավեճը ուսուցման ակտիվ մեթոդ է, որի ժամանակ սովորողները կոնկրետ հարցի, հիմնախնդրի վերաբերյալ քննարկում են անցկացնում, հայացքներ, կարծիքներ են փոխանակում: Այս մեթոդը կիրառվում է, եթե անհրաժեշտ է ձևավորել նոր գիտելիքներ, հաղորդակցական հմտություններ, սեփական կարծիքը հայտնելու, ինչպես նաև դիմացինի կարծիքը լսելու և հարգելու կարողություններ:Բանավեճի մեթոդը սովորողներին ակամայից ներգրավում է ուսուցման պրոցեսում և ապահովում բարձր ակտիվություն:

Վենի դիագրամ- Ուսուցման մեջ մեծ կիրառում ունի Վենի դիագրամը: Ուսուցանող ները այս մեթոդը կիրառում են թեմաները, երևույթներն ու կերպարները պատկերելու, համեմատելու և հակադրելու համար: Այս մեթոդի կիրառման շնորհիվ բարձրանում է դասի արդյունավետությունը:

Ակտիվ մեթոդների կիրառման իմ փորձը հայոց լեզվի և գրականության դասաժամերին

Հետաքրքրությունից զուրկ ուսումնառությունը սովորողի համար դառնում է միմիայն պարտադրանք, և սովորողների մեջ մեռնում է սովորելու ձգտումը:Որպեսզի գիտելիքը սովորողին հետաքրքրի և ներգրավի դասապրոցեսում, պետք է կարևորել ուսուցման երեք հարցերից (ի՞նչ, ինչու՞, ինչպե՞ս) երկուսը (ինչու՞, ինչպե՞ս): Ի՞նչ-ը հարցը գիտելիքների այն ամբողջականությունն է, որը սահմանվում է առարկա յական չափորոշիչներով, ծրագրերով: Կարծում եմ՝ յուրաքանչյուր գիտելիք, որը համապատասխանում է սովորողների տարիքային առանձնահատկություններին, կարելի է դարձնել հետաքրքիր՝ շեշտը դնելով ինչու՞-ի և ինչպե՞ս-ի վրա: Ինչու՞ հարցմանը վերաբերում է այն, որ սովորողը պետք է հստակ գիտակցի, թե ինչու է այս կամ այն գիտելիքը սովորում: Այս առումով մեծ է ուսուցանողի դերը. նա պիտի սովորողին հստակ պատկերացում տա, թե x գիտելիքն իրական կյանքում որտե՞ղ և ե՞րբ է կիրառվելու, սովորողն ի՞նչ ձեռք կբերի, ի՞նչ արդյունք կստանա այդ գիտելիքը սովորելու դեպքում: Օրինակ՝ երբ սովորողը գիտի, որ հետագայում աշխատանքի ընդունվելու ժամանակ՝ դիմում գրելիս կամ հարցաթերթիկ լրացնելիս անհրաժեշտ է մայրենի լեզվով հստակ շարադրել մտքեր՝ առանց ուղղագրական և կետադրական սխալների, ապա կսովորի մայրենի լեզուն: Ինչպե՞ս-ը x գիտելիքի մատուցման, ուսուցանման ձևն է: Վերոբերյալ օրինակում, ճիշտ է, գիտելիքը կարևոր է, և սովորողն էլ գիտակցում է դրա կարևորությունը իրական կյանքում, սակայն նրա հետաքրքրասիրությունն ու ներգրավվածությունը կբարձրանա, եթե ուսուցանելիս դասավանդողը մեծ ուշադրություն դարձնի ուսուցման ձևի վրա և կիրառի ակտիվ մեթոդներ: Ակտիվ մեթոդների կիրառման դեպքում մեծանում է սովորողների ակտիվությունը, մտածական և պրակտիկ գործունեութան բազմազանությունը: Ակտիվ մեթոդները պետք է կիրառվեն ուսուցման գործընթացի այն հատվա- ծում, երբ անհրաժեշտ է զարգացնել սովորողների մտածողությունը և ճանաչողական ակտիվությունը: Կարևոր է սովորողների հետ զրուցել, նրանցից իմանալ, թե ի՞նչն է իրենց հետաքրքիր, ի՞նչն է իրենց խթանում ուսումնառության մեջ, ինչպե՞ս են ավելի լավ սովորում: Դա կարելի է անել հարցաթերթիկի միջոցով, որն ուսուցանողին կօգնի հայտնաբերել սովորողի առանձնահատկությունները: Այսպիսով, ուսուցանողը կիմանա՝ ինչպես պլանավորի իր դասը, ինչ մեթոդներ կիրառի, որ սովորողներին կարողանա

ներգրավել դասապրոցեսում:

Հայոց լեզվի և գրականության դասաժամը **մտագրոհով** սկսելը մեծ առավելություն ունի, քանի որ, հարցեր ուղղելով դասարանին, ուսուցանողը միանգամից ակտիվություն է մտցնում սովորողների մեջ և նրանց ներգրավում դասապրոցեսում: Սա արդյունավետ միջոց է դասի սկզբում սովորողներին, որոնք դեռ դասամիջոցային տրամադրության մեջ են, թեմային տրամադրելու: Այսպես, ենթադրենք 5-րդ դասարա նում մայրենիի դասի թեման <<Նամակն>> է: Դասավանդողը դասը սկսում է մտագրո հով՝ հարց ուղղելով սովորողներին՝ <<Վերջերս ու՞մ եք նամակ գրել>>: Այս հարցը բավական է, որ բոլոր սովորողները կենտրոնանան հարցի շուրջ, և ուսուցանողը նրանց քիչ-քիչ ուղղորդում է դեպի դասի թեման:

Հայոց լեզվի և գրականության դասաժամերին կիրառելի է **T-ձև աղյուսակը:** Շատ թեմաների վերաբերյալ կարող ենք օգտագործել այս մեթոդը: Ստորև ներկայացնում եմ երկու օրինակ:

Գեղեցիկ Աստղամանուկ	Տգեղ Աստղամանուկ
գոռոզ	բարեխիղճ
դաժան	գթառատ
եսամոլ	արդար
ուրացող	սիրալիր

Հաճախ կիրառվող մեթոդ է **քառաբաժանը,**որը ապահովում է սովորողների ակտիվ մասնակցությունը դասապրոցեսում: Վերջերս այս մեթոդը կիրառեցի , երբ 6-րդ դասարանում ուսումնասիրում էինք Ավ. Իսահակյանի «Եղնիկը»ստեղծագործությունը:

ի՞նչ պատկեր տեսա	ի՞նչ ձայներ լսեցի	ի՞նչ հույզեր ունեցա	ի՞նչ եզրահանգում արեցիր
աշնան երեկո	շառաչ	կարոտ	կենդանիներն էլ մարդկանց նման ունեն սիրտ և հոգի
ոսկեգեղմ անտառներ	խշշոց	վախ	պետք է հոգատար լինել նրանց նկատմամբ
մացառուտ ժայռեր	մռունչ		

Նույն թեմայի վերաբերյալ շատ արդյունավետ մեթոդ է **պրիզման**:



Ե՛վ հայոց լեզվի, և՛ գրականության դասաժամերին հաճախ կիրառելի մեթոդ է **հինգրոպեանոց շարադրանքը**: Որևէ թեմայի վերաբերյալ սովորած բառապաշարը որպեսզի ամրապնդվի, ուսուցանողը կարող է կիրառել այս մեթոդը: Օրինակ՝ դասի թեման եղել է «Հոմանիշներ»-ը, սովորողները արդյունավետորեն կսովորեն և կհիշեն ուսուցանված բառերը, եթե դրանցով տեքստ կազմեն: Սա նաև նպաստում է սովորողների ստեղծագործական մտքի զարգացմանը: Լեզվական նյութը բացատրելիս շատ եմ օգտագործում **աղյուսակներ, գծապատկերներ**, որոնք դասանյութը ավելի մատչելի և դյուրըմբռնելի են դարձնում: Երբեմն, երբ թեմայի ամփոփման ժամ է, աղյուսակներ կամ գծապատկերներ կազմել հանձնարարվում է սովորողներին:



Այսօր ուսուցման պրոցեսում մեծ տարածում ունի **վենի դիագրամը**: Այս մեթոդը կիրառվում է, երբ անհրաժեշտ է առարկաներ, երևույթներ, կերպարներ համեմատել,

գտնել աղերսներն ու տարբերությունները: Ստորև տրվում է մեթոդի կիրառությունը Նար-Դոսի «Ես և նա» պատմվածքի վերաբերյալ:



Ակտիվ մեթոդներն ու հնարները բազմազան են, դրանք պետք է ընտրել դասանյութին, նպատակներին ու վերջնարդյունքներին համապատասխան:

Բոլոր տարիքի սովորողների համար էլ մեծ արդյունավետություն ունեն **տեսադասերը**: Կարծում եմ՝ բոլորն էլ կհաստատեն, որ օրինակ Ե. Չարենցի ընդգրկուն կենսագրութ յունն ու ստեղծագործական ուղին սովորողը ավելի լավ կընկալի ու կմտապահի՝ տեսադաս, ֆիլմ դիտելով, քան դասագիրք կարդալով:

Սովորելը հեշտ է և գրավիչ, եթե այն վերածվում է խաղի կամ հաճելի զբաղմունքի: Ուրեմն, ուսուցանողի խնդիրն է դասը վերածել խաղի, գիտելիքը մատուցել **խաղային մեթոդով**, որ սովորողին թվա, թե ինքը զբաղվում է իրեն հաճելի գործով, բայց արդյունքում ուսուցանողը ստանա անհրաժեշտ վերջնարդյունքը: Այս մեթոդը առավել կիրառելի է փոքր տարիք ունեցող սովորողներին ուսուցանելիս: Գրողի կենսագրությունը և ստեղծագործությունը խորությամբ ուսումնասիրելու համար արդյունավետ մեթոդ է **հարցազրույց գրողի հետ**: Դասարանը վերածվում է դահլիճի, որի կենտրոնում նստում են հարցազրույց վարողը և հեղինակը: Մյուս սովորողները լրագրողներ են: Լրագրողների հարցերի և հեղինակի պատասխանների միջոցով վեր են հանվում հեղինակի կյանքի մանրամասները:

Մեթոդների հետ միասին միևնույն դասաժամին հնարավոր է կիրառել նաև հնարներ,

որոնք ուսուցումը դարձնում են ավելի նպատակային և ուսուցանողին մոտեցնում են ակնկալվող վերջնարդյունքներին: Ըստ իս՝ սովորողների ներգրավվածությունը բարձրացնել հնարավոր է ոչ միայն ակտիվ մեթոդներով, այլև ՏՀՏ մի շարք գործիքներով՝ quizizz, kahoot, learningapps և այլն: Այս գործիքներով սովորողների մեջ կարելի է զարգացնել մրցակցություն, արագ կողմնորոշվելու հատկություն: Այս գործիքների կիրառումը արդյունավետ է ձևավորող գնահատում կատարելիս:

Եզրակացություն

Այսօր հանրակրթության պետական չափորոշիչը պահանջում է ուսուցում՝ հիմնված ութ կարողունակությունների վրա: Մեր հայրենիքի հզորացման և զարգացման համար անհրաժեշտ ունենալ սերունդ, որը ոչ միայն գիտելիքներ ունի, այլև դրանք կարողանում է կիրառել կյանքում, դրանց հիման վրա կյանքը դարձնում է ավելի լավ:Ուստի ուսուցանողները, այդ ամենը լավ հասկանալով, ուսուցումը փորձում են կազմակերպել ակտիվ, ինտերակտիվ մեթոդներով, որոնց դեպքում սովորողը ոչ թե պասիվ ընկալող է,այլ որոշակի աշխատանք կատարելով՝ ինքն է հայտնաբերում գրտելիքը, ձեռք է բերում կարողություններ, գիտելիքը կապում է իրական կյանքի հետ: Ըստ իմ փորձի՝ շատ արդյունավետ է, եթե ուսուցումը ուղեկցվում է ուսումնական էքսկուրսիաներով, գրական ստեղծագործությունների հիման վրա գրված բեմականացումների և ֆիլմերի դիտումով, թանգարանների և այլ մշակութային վայրերի այցելությամբ, գրողների հետ հանդիպմամբ: Կարևոր է, թե ինչ մեթոդ է ընտրում ուսուցանողը, արդյո՞ք այն մեզ օգնում է հասնել նպատակին և վերջնարդյունքներին, ձևավորել համապատասխան կարողունակություն: Ուսուցանողը մեթոդ կիրառելիս պետք է հաշվի առնի հետևյալները՝

- մեթոդը պետք է համապատասխանի դասի թեմային
- այն պիտի տանի դեպի վերջնարդյունք
- պետք է կարևորել թեմային տրված ժամաքանակը
- պետք է հաշվի առնել սովորողների քանակը և ընդունակությունները
- այն պետք է զարգացնի որևէ կորողունակություն Այս ամենով հանդերձ՝ պետք է նշեմ, որ չենք կարող բացարձակապես մերժել ավանդական մեթոդները: Հմուտ ուսուցանողը շատ լավ գիտի՝ որ դեպքում ինչ մեթոդ կիրառի, որ ավելի արդյունավետ լինի: Ուսուցման մեթոդները բազմաթիվ են և հետաքրքիր: Դրանց միջոցով հաճախ սովորողի մոտ հայտնաբերում ենք այնպիսի ունակություններ, ձիրք, որը մինչ այդ մեզ համար անհայտ էր:
  Ես այս աշխատանքում ներկայացրել եմ այդ մեթոդներից մի քանիսը, որոնք կօգնեն ուսուցանողներին ուսուցման կազմակերպման պատասխանատու գործում:

Գրականություն

1/Ռ. Աղուզումցյան, Լ. Պետրոսյան, Ա. Խաչատրյան Կառավարչական որակների զարգացման հոգեբանական օրինաչափությունները Երևան 2017

2/Մ. Խաչատրյան, Մ. Դավթյան Դասավանդման ժամանակակից մոտեցումներ ու մեթոդներ Զանգակ Երևան 2019

3/Ֆրիդրիխ Էբերտ հիմնադրամ Ուսուցման արդյունավետ հնարներ Երևան Հայաստան 2020

4/Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոն Ներառող դասավանդում Երևան 2023